



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«24» Նոյեմբեր 2023թ.

Հ Ր Ա Մ Ա Ն N 596-Ղ

«ԱՐՄԵՆԻԱ ԷՅՐՎԵՅՁ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴԿԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Ձ» ԿԵՏՈՎ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշմամբ հաստատված հավելվածով և հիմք ընդունելով «Արմենիա Էյրվեյզ» ավիաընկերություն փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի նոյեմբերի 22-ի գրությունը.


Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Նկատի ունենալով, որ «Արմենիա Էյրվեյզ» ավիաընկերություն փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ձմեռային ժամանակահատվածից սկսած՝ 2023 թվականի դեկտեմբերի 2-ից՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ Երևան/UDYZ/-Ստավրոպոլ/URMT/ երթուղով Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացմամբ բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն

որոշմամբ հաստատված հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին, սույն կետում նշված երթուղով մեկնող ուղևորներին տրամադրվող «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետով սահմանված արտոնության սկիզբ սահմանել 2023 թվականի դեկտեմբերի 2-ը՝ 36 ամիս ժամկետով՝ Երևան/UDYZ/-Ստավրոպոլ/URMT/ ուղղության համար:

2. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

3. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պարտականությունները կատարողին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի հանձնումն Ընկերությանը:

 Recoverable Signature

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ